№ 174 Հոկտեմբերի 11 (23) 1879 Հոկտեմբերի 11 (23) № 174

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ։

Թղթակցությունք գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Հասարակաց դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կրօնական տեսակէտը ազգային խնդրի մէջ։—Ներքին տեսութիւն։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ «Մասիսի» յօդուածը։ «Մասիսի» թղթակցութիւնը։—Խառն լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։—Բանասիրական։ Թուղթ խաղացող։

ԿՐՕՆԱԿԱՆ ՏԵՍԱԿԷՏԸ ԱԶԳԱՅԻՆ ԽՆԴՐԻ ՄԷՋ

—

«Մշակի» երէկվայ համարում տպված Պարսկաստանի նամակը ակամայ ծնեցնում է մեր մէջ հետևեալ տխուր մտածմունքներ։

Հայերով բնակված որ երկիր կամենաք վեր առէք, համեմատեցէք այդ երկրի հայ ազգաբնակութեան թիւը քսան, երեսուն տարի սրանից առաջ նոյն երկրի այժմեան հայոց ազգաբնակութեան հետ,—և կը տեսնէք որ գրեթէ ամեն տեղ հայերը պակասել են թւով....

Մեր ազգը տնտեսապէս աւելի ապահով դրութեան մէջ է, քան թէ հայերին շրջապատող միւս ազգութիւնները, ուրեմն և աւելի հակումն ունի բազմանալու, աւելի էլ ամուր կերպով պահում է իր ազգային, մանաւանդ իր կրօնական աւանդութիւնները, քան թէ ասիական մի որ և է այլ ազգութիւն, հասցնելով իր հնամենութիւնը մինչև չենականութիւն և չը խառնվելով ոչ մի ուրիշ ազգութեան, կամ ցեղի հետ,—ուրեմն ի՞նչ է պատճառը որ հայերը ոչ թէ միայն թւով չեն բազմանում, այլ և պակասում են։

Հայերի իրանց հայրենիքում պակասելու գլխաւոր և կործանիչ պատճառը՝ գաղթականութիւնն է։ Երկրորդ պատճառը նոյն իսկ այն է, որ հայը չէ խառնվում ոչ մի ուրիշ ցեղի հետ։ Իսկ դա Փիզիօլոգիայի և ստատիստիկայի մէջ ապացուցված մի ճշմարտութիւն է որ այն ցեղերը, որոնք չեն խառնվում ուրիշ ցեղերի հետ, որոնք միշտ իրանց մէջն են ամուսնանում, նրանք այնքան պտղաբեր չեն լինում, նրանց ոյժերը սպառվում են, նրանք ոչ թէ միայն քիչ են բազմանում, բայց և ծընված մանուկները մարմնով թոյլ և վատառողջ են լինում։

Բայց կայ և մի երրորդ պատճառ, որ հայերը ամեն տեղ, ամեն երկրում թւով նուազում են. այդ պատճառը մեր ազգի մէջ արմատացած կրօնական տեսակէտն է։

Բացատրենք մեր միտքը։ Հայը քրիստոնէութիւնը ընդունելուց յետոյ, դադարել է ինքն իրան ազգութիւն համարել, այլ սկսել է համարել իրան միմիայն մի կրօնական աղանդ։ Հայի մէջ մինչև այն աստիճան արմատացել է այն համոզմունքը, որ միայն նա է հայը, ով որ լուսաւորչական դաւանութեան է պատկանում, նրա հասկացողութեան մէջ մինչև այն աստիճան անբաժան են ազգութեան և կրօնի գաղափարները, այն աստիճան նա անհնարին է համարում հայ լինել, առանց դաւանելու լուսաւորչական կրօնը,—որ երբ համոզմամբ հայերից մինը ընդունում է մի ուրիշ քրիստոնէական դաւանութիւն՝ բողոքականութիւն, կամ կաթոլիկութիւն, կամ ստիպմամբ ընդունում է մահմեդականութիւն, նա թէ ինքն դադարում է իրան հայ համարել, թէ նրա հայրենակիցները այլ ևս նրան հայ չեն համարում....

Հայ-բողոքականը կամ հայ-կաթոլիկը, նոյն իսկ այն պատճառով, որ լուսաւորչական լինելու ժամանակ իրան հայ էր համարում ոչ թէ այն պատճառով որ ցեղով հայ էր, այլ միայն այն պատճառով որ կրօնով հայ էր,—հէնց որ փոխում է իր կրօնը, համոզվում է որ էլ հայ չէ և միւս հայերն էլ դադարում են նրան հայ համարելուց։

Այդպիսով մի երկիր, մի նահանգ, մի գաւառ՝ Պարսկաստանում, Թիւրքիայում, թէ Կովկասում, որտեղ տաս տարի առաջ դիցուք 40,000 հայ կար, իսկ այժմ այդ թւից, դիցուք 5000 մարդ ընդունել են բողոքականութիւն,—այդ երկրի ազգաբնակութիւնը նկարագրելով հայը (լինի նա հոգևորական, թէ աշխարհական, ճանապարհորդ, թէ լրագրի թղթակից), երբէք չի ասի թէ այդ երկրում 40,000 հայ կայ, այլ կասի միայն 35,000, որովհետև բողոքական 5000 հայերին նա երբէք հայ չի համարի։

Հայը հայերի վիճակագրութիւնը անելով երբէք ազգի ցեղական յատկութիւնը աչքի առաջ չունի, այլ միայն նրանց է համարում հայոց ազգութեան անդամներ, որոնք Էջմիածնի հօտ են կազմում։ Մի երկրի մէջ հայերի թիւը հաշուելիս, մենք բաւականանում ենք դիմել հայ-լուսաւորչական եպիսկոպոսին, վարդապետին, կամ քահանային, հարցնում ենք նրանից ինչքան անդամներ ունի նա իր ծուխի մէջ և տեղեկանալով այդ ծուխի անդամների թւի մասին, ասում ենք՝ այս ինչ, կամ այն ինչ երկրում այսքան հայ կայ։ Հայ նշանակում է հայ-լուսաւորչական։

Մենք զարմանում ենք որ հայ-կաթոլիկը, կամ հայ-բողոքականը իրանց հայ չեն համարում, բայց

նում, նա ունենում է մի պակասութիւն, այնպէս էլ էրդօն է, «թուղթ խաղացող» է։

Ողորմելի դրութիւն. խեղճը՝ որ ունի կին, որդի, և որ մեծ դժուարութեամբ վաստակում է չարաթը մի ամենաչնչին գումար, որով դժուար է ընտանիք կառավարել, թուղթ խաղացող է, այն աստիճանի, որ ոչ մի ժամանակ աշխատածը ամբողջութեամբ տուն չէ բերում։

II.

Ժամի 12-նէ։ Զմեռվայ սառնամանիքը համարձակ տիրապետում է ամենայն տեղ, անձրևը նոր դադրել էր, ճանապարհներին ցեխ էր, և անցուդարձ անողները հազիւ էին երևում։ Մի յետ ընկած պանդոկի մօտ կանգնած էր մի կին, որի դէմքից և շարժողութիւններից երևում էր, որ նա մէկին սպասում է։ Ահա նա բարձրանում է սանդերի ծայրերի վրա և մօտենում է պատուհանին. երբեմն նա պատուհանի ճեղքից ներս է նայում, երբեմն յետ ու առաջ է գնում։ Նրա երեսին նայողը իսկոյն կը դուշակէր որ նա զբաղված է տխուր մտածողութիւններով։

Նրա համբերութիւնը հատաւ, նա պատուհանը բաղխեց.... պատասխան չը կար, բաղխում է երկրորդ անգամ, աւելի սաստիկ կերպով...։ Ներսից լսվեց հայհոյանք, դուռը բացվում է և դուրս է գալիս Էրդօն։

—Բաւական չէ՞, ինչքան դու ինձ չփոթեցիր, տխրեցրիր քո այստեղ գալովդ, ասում է նա, չէ՞ որ ես քեզ արգելեցի այստեղ երևալ։

—Բայց Էրդօ, ասաց սպասող կինը տխուր և ցած ձայնով, ես խօ ներս չեմ մտնում....

—Ուրեմն այստեղ ինչ բան ունես, ինչ ես ուզում։

—Ես ուզում եմ որ դաս տուն, որպէս զի տանել չը տաս վաստակած փողդ, որը ապրելու համար մեզ անհրաժեշտ է. աղաչում եմ, եղիր քիչ խելացի։

—Ախ Աստուած, բաւական չէ, Երբ դու կը դադարես այստեղ գալուց և ինձ զզուացնելուց, ասում ես «ապրելու համար անգամ կօպէկ չունենք»—ահա քեզ փող, ասաց նա տալով նրան մի քանի արծաթ, այժմ տուն գնա, և թող ինձ հանգիստ, որ տեսնեմ ինչ եմ անում։

—Միասին գնանք....

—Ասացի որ գնաս. բաւական է, արդէն ժամանակ է քեզ քնելու, պատուաւոր կինը այս ժամանակ ճանապարհին չի կանգնի, տեսնողը ինչ կասի, ուրեմն հեռացիր այստեղից չուտով։

Կնոջ սէրը դէպի իր ամուսինը մեծ էր. նա կամենում էր ուղղել նրան. նա չէր ուզում առանց նրան տուն գնալ, և բացի սրանից եթէ էրդօն տանել տար իր ինչին փողը, նրանք պէտք է քաղցած մնային, ուստի ուշադրութիւն չը դարձնելով իր մարդու բարկութեանը ասաց.

—Իսկ դու չուտ տուն կը գաս։

—Շուտ, շատ չուտ, կէս ժամից յետոյ։

—Կնոջ դէմքի վրա մի ուրախութիւն նշմարվեց, որ մարդը խոստացաւ կէս ժամից յետոյ տուն գալ։

Կնոջը գրկելուց յետոյ, Էրդօն դառնում է պանդոկը, իսկ կինը գնում է տուն։

III.

Անցաւ կէս ժամ Էրդօն չերևաց։ Անցաւ մի ժամ էլ, Էրդօն էլի չէր երևում։ Կնոջ սէրը դէպի մարդը մեծ էր, և կինը չը կարողանալով աւելի համբերել, վերկացաւ, որ գնա ասի մարդուն որ տուն դայ, ուստի չը նայելով ցրտին և այլ արգելքներին, որոնք կարող էին կէս գիշերուայ մէջ ամեն քայլափոխում պատահել, նա գնում է դէպի դուռը։

Դրսում ցուրտ էր և անձրև էր գալիս. ճանապարհներին ոչոքի չէր կարելի տեսնել, բացի մի քանի անցուդարձ անող ոստիկաններից։

Գիշերվայ խաւարը մարդու սարսեցնում էր, և ընդհանուր խաղաղութիւնը չփոթում էին մի քանի կառքեր, որոնց վրայի լապտերները փայլում էին խաւարի մէջ, ինչպէս վայրենիի փայլուն աչքերը գիշերվայ խաւարում։

Պանդոկները փակված են և ոչ մի տեղից լոյս չէ երևում։ Բայց ուշադրութեամբ նայելուց յետոյ, կարելի էր տեսնել մի փոքրիկ լոյս մի պանդոկի մէջ, որտեղ երևում է մարդու ստուեր։ Սա Էրդօի կինն է, որ կէս գիշերին եկել էր մարդուն կանչելու։

Նա մօտենում է պատուհանին. բայց կրկին յետ է քաշվում, կարծես երկիւղ է կրում։ Բայց վերջապէս հաստատ քայլերով մօտենում է պատուհանին և բաղխում է։ Ցիրում է լռութիւն։ Մի քանի րոպէից յետոյ, այս ձայնից Էրդօն դուրս է վազում։ Մի գազանային կատաղութիւն է երևում նրա դէմքի վրա, որից դէմքը մի անճոռնի կերպարանք է ստացել. նրա մազերը բիզ—բիզ կանգնած են, ատամները կրճատցնում է։

—Ինչպէս, այսպիսի ուշ ժամանակ դու դեռ այստեղ ես. երևում է ունես ցանկութիւն ծանօ-

մոռանում ենք որ նրանք էլ հայեր են, ուրեմն ունեն հայի բոլոր յատկութիւնները, նրանց մէջ էլ արմատացել է այն հայեացքը որ հայ լինել, նշանակում է լուսաւորչական լինել, ուրեմն հէնց որ նրանք փոխում են իրանց կրօնը, նրանք այլ ևս իրանց հայ չեն համարում, նոյն իսկ այն պատճառով որ նրանք հայեր են, իսկ ամեն հայի յատկանիշն է ազգութիւն բառով միմիայն կրօն հասկանալ....

Մենք ինքներս մեղաւոր ենք որ բողոքական և կաթոլիկ դառնալով, այլ ևս մեզ հայ չենք համարում, որովհետև քանի որ լուսաւորչական էինք, մեզ հայ էինք կոչում ոչ թէ այն պատճառով որ հայոց ազգութեան, հայոց ցեղին էինք պատկանում, այլ այն պատճառով որ լուսաւորչական եկեղեցու անդամներ էինք....

Այդ կրօնական տեսակէտն է նոյնպէս պատճառ, որ շատ երկիրներում հայ ազգի թիւը հետզհետէ նուազում է և այդ ազգը կարող է ժամանակով կատարելապէս անհետանալ:

Մի որ և է գաւառում, Պարսկաստանում կամ Թիւրքիայում, որտեղ քառասուն տարի առաջ 100,000 հայ կար, դիցուք այդ քառասուն տարվայ ընթացքում հայերի կէսը բողոքական են դարձել—և մենք էլ չենք ասում թէ հայերը այդ գաւառում հարիւր հազար են, այլ ասում ենք որ նրանց թիւը նուազել է մինչև 50,000 հոգի, անտես առնելով հայ-բողոքականներին:

Այդ կրօնական կործանիչ տեսակէտը կարող է մեզ այնտեղ հասցնել, որ երբ թիւրքաց հայերին ինքնավարութիւն կուզենան տալ, հայ-լուսաւորչականների թիւը այնքան աննշան կը լինի, որ Եւրոպան արժանի չի համարի Հայաստանին ինքնավարութիւն տալ: Իսկ հայերի թիւը ճշմարիտ ոչ թէ միայն չէ նուազում, բայց գուցէ և բազմանում է, միայն թէ մեր մէջ արմատացած կործանիչ կրօնական հայեացքի շնորհով ոչ մենք մեր այլադաւան եղբայրներին հայ չենք համարում, ոչ էլ նրանք, բուն հայեր լինելով և հաւատարիմ մնալով հայի բնաւորութեանը, իրանց հայ չեն համարում:

Այն ժամանակ լուսաւորված աշխարհը, Եւրոպան, իրաւունք կունենայ թիւրքաց հայերին ասելու՝ դուք ձգտում էք ինքնավարութեանը, քաղաքական կեանքին,—բայց ձեր կրօնական ուղղութեամբ ապացուցիք որ արժանի չէք այդ կեանքին, որովհետև ինքներդ ձեզ վրա երբէք չէք նայել և չէք նայում որպէս ազգութեան վրա, այլ ձեր ազգը կազմող բոլոր մասերը իրանց վրա նայում են միմիայն որպէս կրօնական աղանդների վրա:

Այսպիսով հայ-լուսաւորչականների կրօնական տեսակէտը ժառանգաբար անցնելով հայ-բողոքականներին և հայ-կաթոլիկներին, ազգը կազմող երեք մասերի մէջն էլ կը սպանի ազգային գաղափարը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են, որ այնտեղի քաղաքային ուսումնարանի մէջ աշակերտների հետ վատ են վարվում, նրանց ծեծում են: Այդ մասին ուսումնարանի տեսչին դանգատվել են:

—

Մեզ գրում են ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ հետևեալը. «Քաղաքային—հասարակական բանկը կարելի է շուտով բացվի, բայց թէ ովքեր կը լինեն բանկի դիրեկտոր և խորհուրդի անդամներ մինչև այժմ չէ որոշված: Մեր հասարակութիւնը անծանօթ լինելով բանկային գործերին, առաջին տարին կարելի է դժուարութիւններ կրէ: Հասարակութիւնը ի նկատի ունենալով առաջին երկու տարիների շատ եկամուտ չունենալը և սկզբնական ծախսերը, վճռեց առաջին երկու տարին առճիկ չը տալ թէ դիրեկտորին և թէ խորհուրդի անդամներին:»

—

Մեզ գրում են ԵՐԵՒԱՆԻՑ. «Օրերումս պատահեցի մի քանի տիրացուների, որոնցից հարցրի, թէ նոքա ուր են գնում: Գնում ենք Ս. Էջմիածին, պատասխանեցին նոքա: Ի՞նչի համար: Սատանայ ձեռնադրվելու: Ցետոյ իմացայ, որ տիրացուները գնում են վարդապետ ձեռնադրվելու: Լաւ վարդապետներ կը լինեն:»

—

Մեզ գրում են ԵՐԵՒԱՆԻՑ, որ Նորք անուանված քաղաքամասի ուսումնարանի հոգաբարձութեան մէջ երկպառակութիւններ են ծագել:

—

Կովկասեան Կայսերական բժշկական ընկերութիւնը յայտնում է որ Է. Ր. Հօլմբլատի անուան ստիպենդիայի վականսիան Նորին Կայսերական Բարձրութեան Մեծ Իշխանուհի Օլգա Ֆէօդորովնայի ԹԻՖԼԻՍԻ կանանց գիմնազիայում, այժմ բացվել է: Ցանկացողները ստիպենդիայից օգուտ քաղել հրաւիրվում են խնդրագիրներ ներկայացնել ընկերութեանը, հասցնելով նրանց ընկերութեան քարտուղար Ն. Ն. Ռուչկովին: Կոլոմնա, տուն № 145:

—

Ստացանք Իշխ. Մ. Բէհբութեանցից հրատարակվող «Հայկական Թատրոն» վերնագրով ժողովածուի վեցերորդ տետրակը, որ պարունակում է իր մէջ հանգ. բժիշկ Միքայէլ Տէր-Գրիգորեանցի «Պառաւներուն խրատ» վոդեվիլը և Թատրոնասէր անունով ստորագրված «Թատրոնական ժամանակագրութիւն» յօդուածը: Բրոշիւրը տպված է Թիֆլիսում, Ց. Մարտիրոսեանցի տպարանում, ներկայ 1879 թվին:

—

Կիրակի օր, հոկտեմբերի 14-ին Արծրունու Թատրոնում տիկին և պարոն ԴԷԿԷՐ-ՇԷՆԿ և իշխանուհի ԵՆԳԱԼԻՇԵՎԱ տալու են մի ներկայացումն: Մանրամասնութիւնները կը յայտնենք:

—

«Մշակի» № 173 բանասիրական բաժնում տպվեցաւ օրիորդ Ն-ի գեղեցիկ յօդուածը «Կանանց խնդիր» վերնագրով: Մենք կը կամենայինք այդ յօդուածի միայն մի տեղը յիշել, որ երևում է մեզ օրիորդի կողմից անարդար մեղադրանք: Հեղինակը ասում է. «Շատ է խօսացել այս մասին արևմտեան և Ռուսաստանի մամուլը, այս ամենը յայտնի է մեր մամուլի առաջնորդներին, բայց դժբաղդաբար, նրանցից շատ սակաւ մասը դարձրեց իր ուշադրութիւնը այս խնդրի վրա: Ինչին արդեօք վերաբերենք այդ անտարբերութիւնը. արդեօք անհամակրութեան:» Մենք թոյլ կը տանք մեզ յիշեցնել օրիորդին, որ ոչ միայն «Մշակը» իր բազմաթիւ առաջնորդող յօդուածները նուիրել է կանանց աշխատանքի խնդրին, մատնացոյց կանենք նրան, օրինակ, Գրիգոր Արծրունու Թիֆլիսի Մարիամեան դպրոցում այդ խնդրի մասին կարդացած ճառը, որ տպվեցաւ «Մշակի» մէջ, նոյնպէս թէ Գ. Ա. և թէ Վ. Տ. ստորագրութեամբ բազմաթիւ առաջնորդող յօդուածներ, ինչպէս և անցեալ տարի մեր լրագրի բանասիրականի մէջ տպված գերմանական արհեստագործական դպրոցների, կանանց ընկերութիւնների և կանանց հրատարակութիւնների մասին Լայպցիգի նամակները, բայց և «Մշակից» շատ առաջ, «Հայկական Աշխարհի» մէջ, 1869 թվին, ապրիլի և մայիսի տետրակներում տպված Գրիգոր Արծրունու մի մանրամասն յօդուած Բելգիայի և Ֆրանսիայի իգական արհեստագործական դպրոցների մասին, որի մէջ բերված էր և այդ տեսակ դպրոցներից մինի պրոգրամը: Մամուլը, ուրեմն, ուշադրութիւն էր դարձնում, բայց մամուլը մեղաւոր չէ եթէ մեր հասարակութիւնը ահա տասն տարուց աւելի է որ բոլորովին ուշադրութիւն չէ դարձնում կանանց արհեստագործական դպրոցների խնդրի վրա: Երբ յօդուածը տպվեցաւ «Հայկական Աշխարհի» մէջ, Ֆրանսիայում և Բելգիայում արդէն երեք տարի է որ այդ դպրոցները գոյութիւն ունէին, ուրեմն, 1866 թվին հիմնվեցան. իսկ Գերմանիայում իգական արհեստագործական դպրոցները աւելի էլ վաղ իրագործվեցան:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍԻ ՅՈԴՈՒԱԾՔ

—

Մեր երէկուան և առջի օրվան Թիւերուն մէջ Ասիոյ բարենորոգմանց խնդրոյն վրա Թայմզի մէկ նոր յօդուածն հրատարակեցինք: Ինչպէս տեսնուեցաւ, Թայմզ՝ որ երկու ամիս առաջ կը պահանջէր ժամանակ և միջոց տալ Թանալ իմ հարուածների հետ, ճաշակել իմ բարկութեան պտուղը:

—Տալիս եմ իրաւունք, ինչքան ուզում ես ծեծիր, միայն աղաչում եմ որ տուն դաս....

—Ո՞հ, ինչ ես ուզում ինձանից, ինչ է քեզ հարկաւոր: Թէ փող ես ուզում, Աստուծով միթարվես, էլ ոչինչ չունեմ. իսկ այս չունենալու պատճառը դու ես, որ քո գալովդ հանգստութիւնս չփոթեցիր, և նրանից յետոյ արածս չիմացայ ինչ էր, և ահա էլ ոչինչ չունեմ....

—Աւելի վատ. այնուամենայնիւ ինչ որ էլ չը լինի, եկ գնանք տուն, ամենայն օր մի և նոյն է պատահում:

—Այդ քո գործը չէ, մի և նոյնն է պատահում, թէ ոչ, դու չես աշխատում փողը, թէ ուզում ես ճշմարիտ խօսեմ, առանց այս պարապման կեանքը ինձ անտանելի է, իսկ եթէ քիչ անդուրեկան է այս, քեզ համար վատ, իսկ ինձ համար և մի նոյնն է: Միայն դու մի երևակայիր, որ ես քո խրատներդ ցանկութիւն ունեմ լսելու:

—Ուրեմն Էրդօ, ասաց կինը մի ձայնով, որի մէջ յուսահատութիւն էր երևում, չես կամենում տուն գալ:

—Ոչ, ոչ, ոչ, աւելի լաւ է գնա դուն և պառկիր քնելու, որով կը տաս ինձ միջոց գործս լաւ առաջ տանելու:

—Ես կը գնամ քեզ հետ միայն:

—Շատ բարի, ուզում ես սպասիր, և այս ցըրտումը սատկիր:

Եւ այս ասելով Էրդօն անհերևակայելի կատաղութեամբ վերադառնում է պանդոկը...

Մնալով մենակ, անբաղդ ջահել կինը, ծածկում է երեսը իր ձեռքերովը և թափում է դառն արտասուք:

Հեշտ է երևակայել թէ ինչ տխուր մտածողութեամբ էր զբաղված խեղճ կինը, երբ խեղճը մի կողմից մտաբերում էր իր «աէրը» դէպի իր մարդը, և միւս կողմից «դառնութիւնը», որ նոցա գերդաստանը սպասում էր իր ամուսնու այսպիսի գործերով պարապելուց յետոյ:

Մտնելով պանդոկը՝ նա սկսեց էլի իր խաղով պարապել. Էրդօի բանը աջողակ չէ. նա իր վերջի կօպէկները մէջ տեղ դրեց:

Բայց ահա բաղդը բարեկամացաւ Էրդօի հետ, նա տանում է: Խաղի համար նշանակած դումարի չափը երկապատկվեց, նա երկրորդ անգամ տարաւ, ահա և երրորդ անգամ. նա շարունակ տանում է...

Ժամը երեքն էր, այն ժամանակը՝ երբ պանդոկապետը պէտք է դուռը փակէր և հիւրերը պէտք է թողնէին և դուրս գնային:

Էրդօն տարաւ շատ մեծ դումար, մեծ հարստութիւն նորա համար. հպարտացած իր աջողութեամբ նա վերջապէս դառնում է տուն, ցոյց տալու կնոջը, որ ինքը ճշմարիտ էր և զուր չէր, որ չէր ցանկանում տուն գալ: Բացի սորանից նա սովորեց և կերպը թղթախաղում տանելու: Այսքան փող, ասում էր նա ինքն իրան, փողի քսակը աւելի պինդ բռնելով: Մօտ ամիս և կէս պէտք է աշխատել, որ կարելի լինի վաստակել այսպիսի մի դումար:

Այսպէս մտածելով նա հասաւ այն տեղին, որտեղ քիչ առաջ իր կինը կանգնած իր հետ խօսում էր, բայց կինը այլ ևս այնտեղ չէ:

Խեղճը տուն է գնացել, ես նորա հետ խստութեամբ վարվեցայ... բայց ոչինչ եթէ խիստ չը լինէի, այժմ առանց մի կօպէկի տանը նստած կը լինէի, ես այժմ կը գնամ և կը սկսեմ փայփայել նորան և խստութեանս տեղը կը հանեմ: Կը տամ նորան այնքան փող, որքան կամենում է, յետոյ ծծմօրը կը տամ երկու ամսվայ վարձը և մենք այսպիսով կարող ենք ապրել երկար ժամանակ խաղաղ և ուրախ:

Այսպէս մտածելով նա արդէն մօտեցել էր իրանց տանը. բարձրացնում է գլուխը և նայում իրանց սենեակի վրա. լոյս չէ երևում, այնտեղ մութն է...

—Զարմանալի չէ—մտածեց նա, կէս գիշերից ժամեր են անցել, յիմարութիւն կը լինէր այս ժամանակ արթուն մնալ, գիտեմ իմ սիրունիկս քնել է, ասում է ինքն իրան Էրդօն:

Բաղխում է: Դռնապանուհին բաց է անում դուռը հարցմունքով.

—Ո՞վ է:

—Էրդօն:

—Էրդօ. ձեր տան բանալիքը ինձ մօտ է, ասաց նա, երբ դուռը բաց արեց:

—Մէր բանալին, կրկնեց նա զարմացած, միթէ իմ կինը տանը չէ:

—Ոչ. նա տուեց ինձ բանալին, որ քեզ տամ, և ասաց որ «այլ ևս չէ վերադառնալու:»

—Բայց ուր գնաց նա,—արտասանեց Էրդօն ցածր և տխուր ձայնով:

—Շատ կարելի է մօր մօտ:

—Բայց գիտէք մայրը բնակվում է 20 մղոն այստեղից հեռու...Ախ, Աստուած...այս ինչ պատահեց...

IV

Բ. թաղի մի հեռու մասում, երկոյեան ժամանակ այս բանը ինձ պատմեց ծիծաղաղէմ, գեղեցիկ, երիտասարդ, սև աչքերով, թուխ մազերով և «լաւ հագնված» մի կին:

Նա նստած էր յենած մի «երիտասարդի» ուսին, որի հետ նա ընթրում էր: Այս կինը բռնած ունէր իր սպիտակ փոքրիկ ձեռքերի մէջ անուշահոտ իւղի մի աման, որով քսում էր երիտասարդի մազերը, դէմքի վրան ժպիտ խաղացնելով և...

—Ցնոյ...հարցրի ես:

—Ի՞նչ «յետոյ»...

—Զարմանալի բան, շարունակեցէք, տեսնենք ինչ պատահեց այն կնոջ հետ:

—Ինչ անհասկացող է, ասաց նա, իր աչքերը պինդ ուղղելով երիտասարդի վրա, որին երկար ժամանակ էր որ գննում էր...և դառնալով ինձ, շարունակեց «այն կինը հէնց ես եմ.»

—Դուք, ասացի ես բոլորովին զարմացած:

—Հէ—ինչ է...փոխվել եմ, այնպէս չէ...Հազիւ մի ամիս է...

—Հազիւ մի ամիս, կրկնեցի ես, տեղիցս վայր թռչելով. զարմանալի բան...Ո՛հ, ինչ շուտով փ. քաղաքը փոխում է մարդուն՝ և սովորեցնում նորան «ամեն բան»....

Խաչատուր Մ. Մալումեանց:

Օսմանեան կառավարութեան, որպէս զի իւր հարկ տեսած բարենորոգումներն իւր զետ-ցածին պէս և իւր մարդոց ձեռօք կատարէ, Թայմզ՝ որ դրամի չը գոյութիւնը Փոքր-Ասիոյ բարենորոգմանց յապաղման իբրև արդարացու-ցիչ պատճառ ընդունել կը յանձնարարէր իւր պարզամիտ ընթերցողաց, Թայմզ վերջապէս, որոյ մի քանի խորհրդածութիւնքն ակէ հազիւ ութ շաբաթ առաջ Վագրթի կամ Թէրճէմանը Հազրզաթի յօդուածները կը յի-շեցնէին մեզ, Անգղիական այս տիեզերահռչակ լրագիրը, կըսէ՝ վերջին ժամանակներս Փոքր-Ասիոյ բարենորոգմանց խնդրոյն վրայ իւր լեզուն այն աստիճան փոխած է, խնդրին իւր իրական վիճակին մէջ տեսնելու այնքան մո-տեցած է, որ եթէ Թայմզի փոփոխամտու-թիւնն հաստատելու համար ուրիշ ամէն փաստ պակսի, այս խնդրոյն մէջ իւր բռնած ըն-թացքն իբրև ամենազօրաւոր փաստ կրնայ յիշատակուիլ։ Բայց կը փութամք յարել թէ՝ ինչպէս որ ընթերցողք դիտեցին՝ Թայմզի գաղափարաց սոյն փոփոխութիւնը՝ սխալ կամ անհիմն գաղափարները թողած մարդու մը գաղափարաց փոփոխութիւնն է, և հետևա-բար գովելի է։ Այժմ ակներև կը տեսնուի թէ Փոքր-Ասիոյ վիճակին նկատմամբ մանա-ւանդ վերջին ժամանակներս Անգղիացւոց ստա-ցած պաշտօնական և մասնաւոր տեղեկու-թիւններն՝ այդ երկրին բարենորոգմանց խնդ-րոյն վրայ Անգղիական կառավարութեան, Անգ-ղիական ժողովրդեան և Անգղիական մամլոյն կարծիքները մեծ մասամբ փոխած են, թէև՝ ինչպէս Թայմզի յօդուածներէն կը տեսնուի, տակաւին ուղղութեան կարօտ սխալներ կան, որք գուցէ այսու հետև ճանչուին՝ երկրին վի-ճակին և պիտոյից աւելի խորագնին քննու-թեամբ։

Անկեղծութիւնն Անգղիացւոց մեծ յատկա-նիշն է, և Թայմզ իւր սխալ գաղափար-ները մէկ կողմ թողլով՝ ցուցած է թէ ազ-գային յատկանիշին հաւատարիմ մնալու հե-տամուտ կը գտնուի։ Երկու ամիս առաջ Թայ-մզ պարզապէս կը պնդէր թէ Եվրոպայի կանոն վիճակը կրնայ Թուրքիոյ բարենորոգմանց գործադրութիւնն յետաձգել. իսկ այժմ բացո-րոշապէս կը յայտարարէ թէ Օսմանեան կա-ռավարութեան կամք կը պակսի և ոչ թէ դրամ, թէ Օսմանեան կառավարութիւնը գոր-ծադրուելիք բարենորոգմանց նկատմամբ Անգ-ղիոյ տուած խորհուրդները կրաւորական ընդ-դիմութեամբ ընդունած է, և թէ նախ այդ ընդդիմութեան յաղթելու պէտք կայ։ Երկու ամիս առաջ Թայմզ կը պահանջէր, որպէս զի Բ. Դուռը բարենորոգումներն իւր գիտցած եղանակաւ և իւր մարդոց ձեռօք գործադրէ. Իսկ Լոնտրայի այդ մեծ լրագիրն, որ ժամա-նակէ մ'ի վեր Լորտ Պիքոնսֆիլտի նախա-բարութեան ներշնչեալ թերթերէն մին կը համարուի, այժմ բնաւ վստահութիւն չը ցուցներ Օսմանեան կառավարութեան գիտցած եղանակաւ ընելիք բարենորոգմանց, և կը պա-հանջէ որ գաւառական կառավարչաց քով Եվրոպացի խորհրդականներ դրուին, և Պէրու-թը, Երուսաղէմն և ընդհանուր կերպիւ Պաղեստինը յիշելով, բարենորոգմանց դիւրաց-ման համար Թուրքիոյ մէջ Եվրոպական ազ-դեցութիւնն աւելցնելու հարկը կը բացատրէ։ Երկու ամիս առաջ Թայմզ կը պահանջէր որ Օսմանեան կառավարութիւնը ժամանակ մը հանգիստ թողուի՝ քանի որ Գրքի պատե-րազմէն ի վեր տէրութիւնք բոլորովին անհոգ գտնուած էին Թուրքիոյ բարենորոգմանց մա-սին, և ըստ որում քսան տարի պայմանաժամ տրուած էր, ամիս մ'ալ տրուի։ Իսկ այժմ վերոյիշեալներէն ոչ նուազ զարմանալի հա-կապատկեր մը ներկայելով մեզ, կը յայտարարէ թէ Անգղիա՝ Փոքր-Ասիոյ վիճակին նկատմամբ վերջերս ստացած տեղեկութեանց յենլով, ի-րաւունք ունի աւելի ազդու ճնշում մը բա-նեցնել Օսմանեան կառավարութեան վրայ, որպէս զի ընդհուպ իւր խոստմանց գործա-դրութեան ձեռնարկէ. ապա թէ ոչ՝ մեծ աղետներ կը սպառնան Օսմանեան տէրութեան։ Զեմք ուզեր աւելի երկարել մեր խօսքն, և Թայմզի հակասութիւնները մի առ մի յիշա-տակել աստ։

Ինչպէս կը տեսնուի, Եվրոպա և մանաւանդ Անգղիա հետզհետէ աւելի կատարեալ կերպիւ կը ծանօթանան Փոքր-Ասիոյ վիճակին, երկրին զեղծումներն ու պիտոյքն աւելի դրական կերպիւ կը ներկայանան իրենց աչաց առջև, և պէտք եղած դարմաններուն վրա հետզհե-տէ աւելի առողջ գաղափարներ կը կազմուին։ Բայց Փոքր-Ասիոյ վիճակին այսպէս երևան գալէն այդ երկիրն արդեօք իրական օգուտ մը պիտի քաղէ՞, Անգղիա իւր բարոյական և գործնական ջանից մէջ պիտի յաջողի՞, և ար-դեօք Փոքր-Ասիոյ՝ մանաւանդ քրիստո-նեայ բնակիչներն՝ իրաց այս նոր վի-ճակին մէջ իրենց վրա ինկած նոր պարտակա-նութիւնները պիտի ճանչե՞ն և ըստ այնմ այ-սուհետև նուազ անհոգ ընթացք մը պիտի բռնե՞ն.—ասոնք այնպիսի հարցումներ են, ո-րոց պատասխանն ապագայն պիտի տայ, և փափաքելի էր որ, այդ պատասխանն հաստա-տական լինէր։

Փոքր-Ասիոյ վիճակն ու պիտոյքը Տէպա լրագիրը Թայմզէն աւելի ողջմտութեամբ գը-նահատել կը թուի։ Փարիզի այդ կարևոր լը-րագիրը Թայմզի վերջին յօդուածին վրա խօ-սելով՝ կը ճանչէ թէ Փոքր-Ասիոյ համար բազում հիւպատոսաց անուանումն երկրա-ցւոց և օտարազգեաց համար օգտակար պիտի լինի. բայց միանգամայն կը դիտէ թէ Սու-րիոյ բարգաւաճումն ոչ այնչափ հիւպատոսաց շնորհիւ է, որչափ Եվրոպական վաճառակա-նաց բազմութեան, կրթութեան յառաջացման և ժողովրդին համասեռութեան արդիւնքն է, որ կրօնի խորութեան կը յաղթէ։ Տէպա կը հաստատէ թէ Թայմզի առաջարկածէն աւելի ազդու միջոցներ հարկ են, ինչպէս են Լիբանանու կազմութեան հետևողութեամբ կազմութիւն մը, քրիստոնեայ կառավար-չաց անուանում, քրիստոնեաներէ և մահ-մեականներէ բաղկացեալ տեղական զինու-րութիւն մը, և կանոնաւոր հեծելազօրաց մարմին մը, որոյ մէջ պէտք է առնուին ձե-ռագործի անընդունակ մարդիկ, և այնպիսի-ներ, որոց թափառիկ կեանք վարելու ոգին զինուորական կրթութեանց և շարժմանց յարմար կընէ զերենք։ Մինչև որ, կըսէ Գաղ-ղիական լրագիրն, այդպիսի զբաղում մը չը գտնուի կարգ մ'անձանց համար, որք ուրիշ զբաղում չունենալով՝ 'ի ցնաս արուեստաւոր և երկրագործ ժողովրդեան կապրին, վերած-նութեան ամեն ձեռնարկ կանխահաս և ա-պարդիւն պիտի լինի, և Անգղիական կառա-վարութեան ծրագիրն 30—40 տարի կամ պիտի պահանջէ, մինչդեռ դարմանն արագ պէտք է՝ լինի թէ անխուսափելի աղետի մ'ա-ռաջքն առնուլ կուզուի։

«ՄԱՍԻՍ» ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

Երէկ Կարնոյ աշխարհն եռանդագին ցնծա-ցաւ, զի փօսթայէն լուր առաւ թէ հուսկ ուրեմն իբր անձնազոհ նահատակ Ներսէս մի յանուն Հայաստան հայրենեաց Պատրիարքու-թեան յաթոռն վերաբաղմեր է։ Ես և այսօր ի դիմաց բարձր Հայաստանի հարիւր հազա-ւոր Հայոց, խորին յարգանօք ի համբոյր կը մատչիմ Նորին Սրբազնութեան աջոյն, խըն-դրելով որ Աստուածային աջն իւր աջէն բըռ-նելով առաջնորդէ իւրում Սրբազնութեան ի փրկութիւն և ի բարօրութիւն Հայաստա-նեայց և ի վերաշինութիւն Հայաստան հայ-րենեաց։ Թանտարմայի կազմակերպութեան դեռ ձեռնարկուած չէ, Կ. Պոլսէն զնդապետի մը գալստեան կը սպասուի։

Նախաքննիչ դատական մանաժողովոյ մէջ Քղոյ երբեմն գայմագամ Իսմայիլ պէյ Աղա-բէկեան Սարգիս էֆէնտիի դէմ սրամտելով անպատուեց, դուն Հայ ես ըսաւ, ես Հայու մի նախագահութեան տակ եղող սոյն մաս-նաժողովը չեմ ճանաչեր, ուր Հայերը ձեզնէ (Աղաբէկեանէ) կը պաշտպանուին . . . . . Ա-ղաբէկեանի յանդիմանութեանը վրա յանդգնե-ցան նախատել զԱղաբէկեան, բայց վերջինն իբրև պատուաւոր մարդ, փոխանակ զէթ բան-տարկութեամբ պատժոյ ձեռնարկելու, Նու-սուֆ փաշայի գնալով գանգատելը բաւական կը համարի։

Սպիրի գայմագամին կաշառատուութեան ատեն իբրև վկայ ի սկզբան պահուրտող և ապա հաւատարմաբար ձերբակալող տանա-պետին քօմիսէրներուն ձեռամբ չավուշու-թեան հագուստ և տիտղոս կը տրուի, Ալայ պէյը յաջորդ օրը չավուշը կանչելով նախ պաշտօնական նշանները կը քակէ, և ա-պա սաստիկ կը գանակոծէ և նէֆէրի ասպա-ճանի կիջեցնէ... Քոմիսէրը զայս լսելով ի ըս-կզբան սաստիկ կը բարկանան և զայս իրենց պատուոյն դէմ յատուկ նոր նախատինք մը կը նկատեն։ Բայց Ալայ պէյ ցարդ փոխանակ պատժուելու քթին տակէն կը խնդայ։ Այս երկու դէպքերը յիշելով կարող էք մակաբե-րել Քոմիսէրներուն ինչ վիճակի մէջ լի-նելն . . . . :

Մինչ Քոմիսէրը այս օրինակ կը նախա-տուին և գրեթէ անտարբեր իսկ կը գտնուին և գէթ յանուն անձնական պատուոյ չեն գրը-գռուիր, սաստիկ կը յուզուին Վանայ առաջ-նորդարանէն 'ի Կարին յղուած ի ձեռն տե-ղոյս Ազգ. վարչութեան իրենց յանձնեալ Ար-ծկեցոյ կրած հարստահարութեանց հանրա-գրին վերև նշանակեալ Էրմէնիստան Քոմիսէր-լերէ . . . խորագրին վրա, և որ զարմանալին է, Սարգիս էֆէնտի յետս դարձնել կը սպառ-նայ յայտարարելով թէ Էրմէնիստանի Քոմի-սէրներ չեն . . . : Աստուած իմ, մինչ Ար-ծկու Հայեր իրենց Աստուածաշնորհ պաշ-տօնական կերպարանքէն կը զրկուին, այսինքն քթերնին և ականջնին կը կտրուի ու կը սպաննուին իսկ Համզօ պէյէն, և զայս կը տեղեկագրեն առ Քոմիսէրս, և իբրև գեղջուկ մարդիկ պաշտօնական ձևերու մէջ կը սխա-լին, Քոմիսէրը փոխանակ Աստուածային պաշ-տօնական ձևին—մարդկային կերպարանի—կա-րևորութիւն տալու և յուզուելու, կը սրա-մտին հէք գեղջուկներու ձևական մէկ սխա-լին վրա, եթէ սխալ ըսել ներելի է, ի՞նչ. միթէ Հայաստան բառը գործածելը ոճի՞ր մի է, և 4000 տարուան ազգի մը սրտէն նուի-րական այդ բառը ջնջելը դիւրին է . . . :

Ալաշկերտի և Պայազիտի վրայօք, ինչպէս որ գրած եմ նախորդ փօսթայով, Գեր. Ցա-րութին սրբազան յատուկ թազրիրով առ Վալին և առ Քոմիսէրս և առ Անգղեոյ ընդհ. հիւպատոսն դիմեց։ Վալին և Քոմիսէրք հե-ռագրեցին ամենուրէք, ի Վան, ի Սղերդ և այլն, ուր է Պայազիտի Միւթէսարրիֆը։ Մե-կնած պաշտօնատեղիէն կը պատասխանուի թէ 34 օրէ ի վեր աստի մեկնած է ի նոր պաշտօնատեղին իւր Պայազիտ, իսկ միւս քա-ղաքներէն պատասխանուեցաւ թէ չը գիտեմք, ուստի Վալին շուարելով կը յայտնէ զայս Բ. Դրան։ Կը կարծուին թէ Քիւրդերէն սպա-նուած կամ գետամոյն եղած լինի . . . Բայց աւաղ, այդ ևս Հայոց վրա կը ծանրանայ, զի Հայք սոյն եռամեայ անիշխանութեան երե-սէն կը տագնապին, և Քիւրդ պէյեր ասպա-րէզ գտած են սոյն առթէն օգուտ քաղելու։

Նոյնպէս Մշոյ Գեր. առաջնորդէն առ հիւ-պատոս և Քոմիսէրս կը հեռագրուի թէ նո-րընտիր Միւթէսարրիֆն երկու ամիս է 'ի վեր ցարդ չը ժամանելէն՝ անիշխանութիւնը տի-րած է, և թէ ժողովրդեան տառապանքն ան-նկարագրելի է, և թէ Իսլամ ժողովականք արձակ ասպարէզ գտած են . . . :

Քոմիսէրք հեռագիր ընդունած են Բ. Դռնէն թէ երեք ամսուան մէջ բարենորոգ-մունք պէտք էր որ գործադրուէին և այն ժամանակամիջոցը լրանալու վրա է . . . Քո-միսէրք տեղեկագրած են թէ շատ մը հարցմանց հազիւ քանի մը հատին անորոշ պա-տասխաններ ընդունած են, իսկ միւսներուն ոչ, և միանգամայն Քղեցւոց պէյերու մասին գանգատելով կը յաւելուն թէ պատերազմէն հազիւ նոր ազատուած սոյն խառնաշփոթեալ Վիլայէթին բարեկարգութիւնն երկար ժա-մանակի և ազդու և գործնական միջոցներու պէտք ունի . . :

Երզնկայի Միւթէսարրիֆէն առ վալին հե-ռագրեցաւ թէ Տերսիմ վերստին խլրատած և ապստամբած է։ Նոյնպէս հեռագրաւ լուր հասաւ առ Քոմիսէրս թէ Սղերդու Իսպատուլ-ահ Շէյխն ապստամբելով՝ մինչև անգամ ար-քունի զօրաց վրայ յարձակելով ցրուելու յա-ջողեր է։ Վանայ վալին երկու թնդանօթով զօրք յղած է . . : Այս այն Շէյխն է, որս մասին յանձնարարագիր կայ կըսուի Կ. Պոլսէն Քոմիսէր Նուսուֆ փաշայի քով, ինչպէս նաև Շէյխ Ճէլալէտինի տան համար ևս։ Այսպէս երբ արիւնռուշտ բարբարոսք անգամ մեծ կեդրոնէն կը պաշտպանուին, ի՞նչպէս չեն պաշտպանուիր տեղական փոքրիկ կեդրոններ . . . . :

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» այս տարվայ առաջին պրէմիան, այն է 200 ռուբլ, հոկտեմբերի 10-ին խաղացվեցաւ խմբագրութեան մէջ և այդ գումարը տարաւ № 577 ստացականը, որ պատկանում է ԵՐԵՒԱՆԻ մեր բաժանորդներից մինին։ Փողը այս օրերս կուղարկենք հասցէին համեմատ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 հոկտեմբերի։ «Прав. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, թէ Թագաւոր-Կայսրը հրամայել է, որ Սմիւրնայում և Ֆէրզանեան շրջանում ծառայող զինուորների և աստիճանաւորների ծառայութիւնը թոշակառութեան համար կրկնակի հաշվի, այսինքն իւրաքանչիւր մի տարին երկու տարի պէտք է հաշվի։ Ցօտկէբէն գեներալը կոմութեան տիտղոս ստացաւ։ Գեներալ-ադիւտանտ Նօվօսիլսկիին շնորհվեց Անդրէաս Նախակոչի առաջին աստիճանի շքանշանը։

Կ. ՊՕԼԻՍ, 8|21 հոկտեմբերի։ Անգլիան յայտնեց Բ. Դրան, որ նա պատրաստ է ե-րաշխաւորել Թիւրքաց փոխառութեանը, ե-թէ միայն նոր մինիստրութիւնը սկսէ ներքին վերանորոգութիւնները, և թոյլ տայ որ անգլիական ներկայացուցիչները մասնակցեն տեղական վերանորոգութիւններին։

Կ. ՊՕԼԻՍ, 9|22 հոկտեմբերի։ Զէրնօզօրիայի երկայացուցիչը յայտնեց, որ եթէ կամաւորապէս չը յանձնեն Գուսինեան և Պլամեան նահանգները, այն ժամանակ 15,000 չէրնոզօրցիք իրանք կը գրաւեն այդ նահանգները։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 հոկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակն առաջին շրջանի արժէ 94 ր., երկրորդ 93 ր. 12 կ., երրորդ 93 ր. 25 կ., չորրորդ 93 ր. 22 կ., Ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակն արժէ 225 ր., երկրորդ 221 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակն արժէ 90 ր. 87 կ., երկրորդ 90ր. 37 կ., ոսկի 7 ր. 72 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 25,50 պէնս։ Ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 218 մարկ, Փարիզի վրա 269 ֆր. 25 սանտիմ։ Տրամադրութիւնն ամուր է։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԶԱՔ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ «ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ» ստացել է

1 Սրուանձտեանց—ԹՈՐՈՍ ԱՂԲԱՐ 1 ր. 25 կ.
2 Ս. Մանդինեանց—ԿՐՕՆՔ ՀՈԳԵՒԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ 1 ր. —
3 Բժիշկ Ա. Բաբայեանց ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ 1 ր. —
4 Ա. Բահաթրեանց — ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԻ — 25 կ.
5 Երկաթէ ԴԻՄԱԿՈՎ ՄԱՐԴԸ ԵՒ ԱՒԵՏԻՔ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ 1 ր. —
6 Յ. Շիշմանեանի — ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ ՀԱՒԱՔՈՒՄՆ Ա. 1 ր. 15 կ.
7 Փարոս 1879 — — — — թ. 1 ր. —

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆԸ խնդրում է այն անձանց, որոնք իրան հետ գրագրութիւն ունէին, այսուհետև իրանց մասնաւոր նամակներն ուղղել դէպի Երևան, ուր նա այս տարի պիտի մնայ ուսուցչական պաշտօնով, իսկ պատուէրները ըստ առաջնոյն թող ուղղեն Կենտրօնական գրավաճառանոց, որ ինքը պահպանում է իւր մասնակցութիւնը: Երևան քաղաքի և նորա շրջակաների ուսումնարանների վարչութիւնները՝ դիւրութեան համար, իրանց դրամաւոր պատուէրները կարող են ուղղել նոյնպէս և դէպի պ. Տէր Ղեւոնդեանը, որը կաշխատի ամենայն արագութեամբ կատարումն տալ նոցա պահանջներին: Յետոյ վճարելու պայմանով գրքեր ցանկացողները դիմում են ուղղակի գրավաճառանոց:

3—3

Տաք ԵՐՇԻԿՆԵՐ (сосиски) կաղամբով և առանց կաղամբի, ՊԻՐՕԺԿԻՆԵՐ, 9 ժամից առաւօտեան, ճաշ և ընթրիք, ՃԱՇԸ 2 կերակուրներից 35 կոպ., ԳԻՆԻ, ԱՐԱՂ, ԳԱՐԵՋՈՒՐ, ԼԻՄՕՆԱԴ, ԶԵԼՏԵՐԵԱՆ ՋՈՒՐ ամենաէժան գներով կարելի ստանալ պանդոկում որ գտնվում է վրաց Սէմինարիայի հանդէպ, «Ռօսիյսկի» ընկերութեան կանտօրի տակ, ԱՏԱՄԱՆՍԿԻ փողոցի վրա, Զուբալօվի տանը:

2—3

Տրվում է ՎԱՐՁՈՎ վերին յարկում մի բնակարան ՎԵՑ ՍԵՆԵԱԿԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ, իր բոլոր ՅԱՐՄԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ: Եթէ ցանկացողներ կը լինեն ԵՐԿՈՒ ԸՆՏԱՆԻՔ բնակվելու, կարելի է բաժանել երկու մասը, չորս ԵՒ ԵՐԿՈՒ ՍԵՆԵԱԿՆԵՐԻ: Տունը գտնվում է ՆՈՐԱՇԷՆԻ փողոցում. գնի մասին հարցնել այնտեղ տանտիրոջ ԻՍԱՀԱԿ ՓՈՒՂԻՆԵԱՆՑԻՆ:

2—2

ՁԻՒԹԱՅԻՆ ՊԱՏԻՃՆԵՐ

ՆՈՐԻՎԵԳԻԱՑԻ ՄԱՔՐԱԾ ՁԻՒԹԻՑ, որ պատրաստված է Մօսկվայի դեղագործ:

ԳԻՐՇՖԵԼԴՏԻՑ

Գիւցի Փրանսիական յայտնի պատիճների անհամեմատ թանգ գները դրդեցին ինձ պարապել նրանց արդիւնագործութեամբ և որովհետև պատիճների պատրաստելը գաղտնիք չէ և նրանք իրանց մէջ ոչինչ չեն պարունակում, բացի մաքուր Ձիւթից, ես առաջարկում եմ իմ շատ լաւ պատրաստված պատիճները ՖՐԱՆՍԻԱԿԱՆ (ԳԻՒՕՑԻ) ՊԱՏԻՃՆԵՐԻՑ 40% էժան:

Յոյս ունեմ, որ ռուս բժիշկները և հասարակութիւնը խելացի կերպով կը վերաբերվեն դէպի իմ աշխատանքը, որովհետև նոքա առիթ չունեն ռուսաց փողերով պահպանել ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԱՐԴԻՒՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ:

Ծախելու տեղերը. Ռուսաստանի բոլոր դեղատունները և տեղական պահեստները: Գլխաւոր պահեստները. Մօսկվայում, Լուբեանսկի դեղատուն Նա. Ի. Գիրշֆելդտի և Բ. Կեօլեր և ընկ. Նիկօլսկիի վրա: Թիֆլիսում Ցուրինօվի և Բօստօմօվի դեղատուն:

21—25

Կենտրօնական Գրավաճառանոցում, Դվօրցովյ փողոցի վրայ, Արծրունու Գալլերէյում, վաճառվում են հետևեալ նոր գրքերը:

1. Կարմիր լապտեր, փոքրիկ մանկանց ընթերցանութեան համար. Թարգ. օր Ն. Տէր-Մարկոսեանի պատկերազարդ և կազմած. գ. — ր. 50 կ.
2. — նոյնը առանց կազմի. . . . — » 30 կ.
3. Թուամագ մեզու՝ փոքրիկ մանկանց ընթերցանութեան համար. Թարգ. օր Ն. Տէր-Մարկոսեանի. պատկերազարդ և կազմած. . — » 40 կ.
4. Եղբայր և քոյր մանկական վէպ. Թարգ. Զ. Մսերեանի պատկերազարդ — » 30 կ.
5. Հսկայական ձեռքեր. մանկական վէպ, Թարգ. Զ. Մսերեանի, պատկերազարդ . . . . . — » 10 կ.
6. Փարոս Հայաստանի. պատկերազարդ հանդէս ընտանեկան ընթերցանութեան համար. . . . 1 » — կ.
7. Թորոս աղբար Հայաստանի ճանապարհորդ. Գործ. Գ. Վ. Սրուանձտեանց . . . . . 1 » 25 կ.
8. Երկունք Ժններորդ դարու. գործ Տերենցի. . 1 » — կ.
9. Պատմական ներշնչումներ, գործ. Հրանտ Ասատուրի. . — » 60 կ.
10. Մի կաթիլ արտասուք, զոր կը հեղու. Սիսակ Հայ մոխիրին վրայ . — » 35 կ.
11. Սամուէլ Մուրատեանի կտակի խնդիրը, դատախօսութիւն Ս. Արծրունու. . . . . — » 50 կ.
12. Ուսումնարանի առողջապահութեան հարցեր, բժ. Ա. Բաբայեանի 1 » — կ.
13. Մարմնակազմական կամ անատոմիկական բառարան Լատիներենից և Ռուսերէնից Հայերէն. բժ. Լ. Տիգրանեանցի . 1 » — կ.
14. Կրօնք. հոգեբանական հետազօտութիւն Ս. Մանդինեանի . 1 » — կ.
15. Հայկական Թատրօն. Վուճքի իմ վէճեր, փարս երեք պատկերով գործ. Մ. Տէր Գրիգորեանցի . . . . — » 40 կ.
16. Բերեր բիձու հանաքը. Օպերետա մի գործողութեամբ, Թարգ. Ն. Լալայեանցի . . . . — » 25 կ.
17. Աշնանային երեկոյ գիւղում, վոդրվիլ մէկ արարուածով, փոխադրութիւն Գ. Շահբուդաղեանի . . . — » 25 կ.
18. Բանի ամուսնութիւն. կօմեդիայ մէկ արարուածով, Թարգ. Գ. Ջմշկեանի . . . . . — » 40 կ.
19. Ժանօ և Ժանէտ օպերա-վոդրվիլ, Թարգ. Գ. Շահբուդաղեանցի մէկ գործողութեամբ . . . . — » 40 կ.
20. Պէպօ. կոմեդիա երեք արարվածով, գործ. Գ. Սունդուկեանի . — » 30 կ.
21. Պառաւներին խրատ. վոդրվիլ մէկ արարվածով Մ. Տէր Գրիգորեանի — » 50 կ.

Նոյն տեղը վաճառվում են ամենայն տեսակ դասագրքեր Հայերէն, Ռուսերէն և օտար լեզուների, դասական պիտոյքներ ուսումնարանների և աշակերտների համար, Հայերէն, Ռուսերէն և Գաղիերէն վիպասանութիւններ, ամենայն հասակի ընթերցանութեան և գիտութեան զանազան ճիւղերին վերաբերեալ գրքեր. պատուէրները կատարվում են ամենայն արագութեամբ: Օտարաքաղաքացիք իրանց պահանջները պէտք է ուղարկեն հետևեալ հասցէով. „Въ Тифлисъ. Въ центральную книжную торговлю“

2—10 (2)

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11 — ՏԵՂԵԿԱՑՈՅՑ — ԹԻՖԼԻՍ 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Հոկտեմբերի 10-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլուիմպերիալը)	8	15
Հին 84 պր. մ. արծ. 1000 մ.	1420	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1245	—
Վիդրինի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	235	—
Երկրորդ 5% վիդրինի »	230	—
Մարսելի կուրսը 270—	100	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա	9	45
Վիենայի կուրսը արժէ 121 գլ.	100	—
Դուրեժի բարաթը	4	80
Առևտրական բանկի ակցիան 200 մ.	310	—
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	—	—
Շաքարը բրօցկու	7	30
» միւս տեսակը	7	15
» շաքար աւազը	5	30
» տրանզիտը	5	30
» մաքուր վճառած	10	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից	8	—
Միւս տեսակը հին սերմից	7	40
Բուրդը Թուշի	7	50
» Թարաքամի	4	—
Ալիւրը Շորագալու	2	20
» Երևանի	—	—
Գարին	1	40
Մոմը բնաճարպի (стеар.)	12	40
Մետաքսը Նուխվայ	180	—
Կախեթունը	140	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	50	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	65	—
Կօֆէն մօկօի	26	—
« լիւանի	22	—
« Մանտ ինիյօն	18	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները	1	
Ռուսաստան	2	
Ասիայիա	3	
Անգլիա	4	
Գերմանիա	2	88
Ֆրանսիա	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծննդականների ընդունելութիւնը ցերեկվա և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ: Առանձին սենեակներում ամիսը 30—50 րուբլ: Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 րուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 րուբլ ամսական:

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան, Բժշկապետ Անանօվ:

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան: Մինչև Միխայլովօ (խուռն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ:

	առաւօտ:	երեկոյեան.
Թիֆլիսից	9. 21	5. 18
Գօրր	11. 58	9. 43
Միխայլովօ.	1. 29	11. 59
Րիօն.	6. 47	
Փօթի	9. 40	
	առաւօտ:	
Փօթիից.	9. 13	
Րիօն.	12. 13	
Միխայլովօ	5. 39	1. 37
Գօրի	7. 5	4. 8
Թիֆլիս.	9. 31	7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գնացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ.	90	68	38
Գօրի	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Րիօն	9.	6. 75	3. 75
Փօթի.	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փօստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7: իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան:

Ռուսաստանից և Արտասահմանից փօստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր: Բաքուի տրակտից՝ երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր: Նուխու տրակտից չորեքշաբթի և կիրակի: Բելիկլիւչի տրակտից երեքշաբթի և շաբաթ:

ՆԱՄԱԿՆԵՐ

	կոպ.
Բաց նամակ արժէ	2
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ.	7
Ամերիկա	7
Պարսկաստան	7
Հնդկաստան	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտեան 9-ից մինչև 1 ժամը:

Երկուշաբթի. Լիսիցեվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւնների, Քուչարեանց վիրաբուժական և աչքի հ., Բաբաեվ Ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկէվիչ վիրաբուժական հ., Բէյխ աչքի հ., Վերմիշեվ ներքին հ., Ժուրավլեվ վեներական և կաշու հ., Բաբօվ կրծքի և ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ ներքին հ., Աստուածատուրօվ կանանց հ.:

Հինգշաբթի. Վերմիշեվ և Բուդկօվսկի ներքին հ., Քուչարեանց սիֆիլիսի և միզային գործարանների հ., Ժուրավլեվ Ջղային հ.: Բաբօվ կրծքի և ներքին հ.:

Ուրբաթ. Լիսիցեվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բաբաեվ Ջղային և հոգեկան հ., Աստուածատուրօվ վեներական և կաշու հ.:

Շաբաթ. Վերմիշեվ ներքին հ., Բէյխ աչքի հ., Ժուրավլեվ վեներական և կաշու հ.:

Օբբէխտ, ատամի հ., ընդունում է իր տանը ամեն ժամանակ աղքատ հիւանդներին Բժշկանոցի տոմսակով:

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—ԱՍՏՐԱԽԱՆ. ***. Այդ կողմից միամիտ կացէք: Հարկաւոր ժամանակ մեզ ապացոյցներ կուղարկէք: Աշխատեցէք, որ ձեր նամակները միակողմանի չը լինեն: Գրեցէք Աստրախանի բոլոր դասակարգերի գործերի մասին: Լաւ նամակագրի համար այդտեղ շատ նիւթ կայ: Գրեցէք նոյն ուղղութեամբ, ինչպէս մինչև այժմ գրել էք:

—ԶԱՔԱԹԱԼԱ. Յ. Ա. Ք. Ա. Պատասխանները մեծ մասամբ տպում ենք: Ձերը չենք տպի, որովհետև նամակից ոչինչ չը հասկացանք: Ուրիշին գոնեա գրել տուէք: Միենոյն ժամանակ խորհուրդ ենք տալիս ձեզ, Զաքաթալի գործակալ, տեղական ուսումնարանի հոգաբարձու, ուսուցիչ, Հայ աւագ քաղաքացի սովորել Հայոց, ձեր մայրենի լեզուն:

Дозволено Цензурою 10 Октября 1879 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսօնի Типографія А. А. Михельсона